

դովուրդին ամէնէն տազնապագին փորձանքը -մեր յեղափոխութեան կազմակերպումը իբրեւ գործ ու գաղափարագրութիւն - ամբողջութեամբ կու գայ Ճեմարանէն: Երբ կը պարզէր ինծի Մաթիկ Մելիքխանեանցը մեծ ու շքեղ իր երազները, ինծի կը թուէր տեսնել այդ ամէնուն սկզբնական հանգոյցը բազմակեդրոն, բայց հսկայական գլուխի մը մէջ, որ մեր եկեղեցականութիւնն էր Արարատի ոտքին: Ու կ'ընէի բաղդատութիւնը Արմաշի իմաստուն եպիսկոպոսին, Եղիշէ Դուրեանին հոգեդէն կազմին այդ մարդոց թելադրած տեսլականին հետ: Դուրեան եպիսկոպոս մեծ ու սիրելի դէմք մըն էր, որ քանի մը գեղեցիկ շնորհներու բարիքը խորանարդած էր ուզելով թէ աւամայ, հող չէ հարցը, ու հաճոյքով ենթարկած իր դժուարահաճ իմացականութիւնը սա պատրանքին: Այս դարու սկիզբը, ուր ես տարի մը մտիկ ըրի զինքը, Եղիշէ եպիսկոպոս Դուրեան փառք մըն էր: Մաթիկէն ետք միայն ինծի կարելի պիտի ըլլար այդ ամրակառոյց յղացքը ենթարկել վերլուծման: Հոս չունիմ միջոց այդ վերլուծումին գումարը հաշուեկշռելու, ուրիշ տեղ մը անոր նուիրած ըլլալով բաւարար էջեր^(*): Կը բաւականանամ հոս արձանագրելով առաջին իմ հիասթափումս իմ մեծ ուսուցիչէս, դեռ այդ օրերէն: Բանասէրները արժէքով մարդեր են անշուշտ, երբեմն շատ մեծ նոյնիսկ, պայմանաւ, որ մինակ չըլլան, ըսել կ'ուզեմ՝ մատաղ ուսանողութիւնը մարգելու արարքին մէջ միջադէպներ չդառնան եւ մեռելներու գիտութիւնը, իրենց կախարդանքով գերադաս չընծայեն ողջերուն գիտութեան, այսինքն՝ տրոփուն կեանքին պարտքերուն: Ճիշդ է, որ արմաշական վարդապետները, ուսուցիչները աղէտներու առջեւ

(*) «Պատմութիւն Արեւմտահայ գրականութեան» (Արուեստագէտ սերունդ), Եղիշէ եպս. Դուրեան եւ Թորգոմ եպս. Դուշակեան գլուխները այդ գործին: